ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 1521
24 JUL 2020
Կից Նշում

«23» հուլիս 2020թ. No 2419 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 0103120920 առ 17.07.2020թ փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 5 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ջ. Դարբինյանին՝ նախարարի հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վ.Գաբրիելյանին՝

1) Սույն հրամանը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

2) 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը Առողջապահության նախարարությանը:

3)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ Վ. Գրիգորյանին՝

Ստաց. 24.07.20 ժ. 10³⁰

1) 2 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը նախարարի հաստատմանը և տրամադրել Փորձագիտական կենտրոնին:

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղերի գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

6.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

23.07.2020

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2020թ. հուլիսի 23 - ի N 2419 – Ա հրամանի

Պետական գրանցման երաշխավորված դեղերի ցանկ
համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն առ 28.02.2019 որոշման

| հ | Առևտրային անվանում | միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ | դեղաձև | դեղաչափը և թողարկման ձև (փաթեթավորում) | արտադրող ֆիրմա | երկիր | գրանցման հավաստագրի իրավատեր | երկիր | բաց թողման կարգ | եզրակացու-թյան համար և ամսաթիվ | Գրանցման ընթացակարգ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Պիկովիտ | վիտամին A, վիտամին D3, վիտամին B2, վիտամին B6, վիտամին B1, վիտամին B12, վիտամին C, վիտամին PP, D-պանթենոլ | օշարակ | 900ՄՄ/5մլ+100ՄՄ/5մլ+1մգ/5մլ+0,6մգ/5մլ+1մգ/5մլ+1մկգ/5մլ+50մգ/5մլ+5մգ/5մլ+2մգ/5մլ; 150մլ ապակե շշիկ և չափիչ գդալ 5մլ | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո- որակի և բաց թողնման հսկող, ԿՌԿԱ, տովարնա զդրավիլ, դ.դ., Նովո Մեստո, Պովհովա փ. 5, 8501 Նովո Մեստո, Սլովենիա- բալք արտադրող, փաթեթավորող | Սլովենիա | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Սլովենիա | ԱԴ | 19305 17.07.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 2 | Էմօքսիպին-Բելմեդ | էմօքսիպին | լուծույթ ներար | 10մգ/մլ; (5/1x5/) ամպուլներ 1մլ | Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ, 220007, Մինսկ, | Բելառուս | Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ, | Բելառուս | Դ | 19306 17.07.2020 | Ընդհանուր հիմունք |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կման | բլիստերում, (10/2x5/) ամպուլներ 1մլ բլիստերում, (10) ամպուլներ 1մլ պիտակ բանդերոլ | Ֆաբրիտսիուս փ., 30- որակի և բաց թողնման հսկող, Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ, 220007, Մինսկ, Ֆաբրիտսիուս փ., 30, N2, Բելառուս- բալք արտադրող, փաթեթավորող | | 220007, Մինսկ, Ֆաբրիտսիուս փ., 30 | | | | ներով (նոր կարգ) |
| 3. | Մելասոն | մելատոնին | դեղահատեր | 3մգ; (20/2x10/) (30/3x10/) | Ռուբիկոն ՍՊԸ, 62Բ, Մ. Գորկի փ., 210002, Վիտեբսկ | Բելառուս | Ռուբիկոն ՍՊԸ, 62Բ, Մ. Գորկի փ., 210002, Վիտեբսկ | Բելառուս | ԱԴ | 19307 17.07.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 4. | Կոֆետամին Թաթֆարմ | կոֆեին (կոֆեին անջուր), էրգոտամին (էրգոտամինի տարտրատ) | դեղահատեր թաղանթապատ | 91,5մգ+1մգ; (10/1x10/) բլիստերում, (20/2x10/) բլիստերում | Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | Դ | 19308 17.07.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 5. | Ֆելոֆրին | ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ) | ակնակաթիլներ | 100մգ/մլ; (1) պլաստիկե սրվակ-կաթոցիկ 10մլ | Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9 | Հայաստանի Հանրապետություն | Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9 | Հայաստանի Հանրապետություն | Դ | 19309 17.07.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |